ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

17.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/48

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7250-18 գրությամբ Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 13.04.2018թ. թիվ 01.3/11/498503-18 գրության հիման վրա, 18.04.2018թ. թիվ 03/26-3/7250-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Կարեն Ավանեսյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Կարեն Ավանեսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Կարեն Ավանեսյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 23.03.2018թ. մասնակցել է ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 23.03.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 23.03.2018թ. մասնակցելով ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնման ընթացակարգին, հստակ պարզել է, որ չունի ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի 25.04.2018թ. պաշտոնապես դիմել է (դիմումը և ուղարկելու փաստը հավաստող ապացույցները կցվել են) ՀՀ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար պարոն Ա. Սահակյանին՝ խնդրելով հայտնել Ա/Ձ Կարեն Ավանեսյանի (ՀՎՀՀ՝ 35031716) մոտ 23.03.2018թ. դրությամբ առկա 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունները ինչ հարկատեսակի գծով են, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն 23.03.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առկա 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունների ծագման հիմքերի (այդ թվում՝ նաև ծագման ժամկետի) վերաբերյալ:

Սակայն հաշվի առնելով երկրում ստեղծված անկայուն իրավիճակը և հայտարարված գործադուլը՝ ՀՀ ՊԵԿ աշխատակազմից դեռևս չի ստացվել որևէ պատասխան՝ ի հայտ

եկած պարտքի իրավական հիմքի վերաբերյալ, որպեսզի Ա/Ձ Կարեն Ավանեսյանը կարողանա ներկայացնել դիրքորոշում 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորության վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը խնդրել է հնարավորություն ընձեռնել ներկայացնելու ապացույցներ, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 23.03.2018թ. դրությամբ չի ունեցել իրեն վերագրվող 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ստանալով համապատասխան պատասխան ՀՀ ՊԵԿ-ի կողմից:

Միևնույն ժամանակ Ա/Ձ Կարեն Ավանեսյանին վերագրվող 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունների պայմաններում խնդրել է քննարկել, թե արդյոք նման պայմաններում Ա/Ձ Կարեն Ավանեսյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ա/Ձ Կարեն Ավանեսյանը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Մասնակիցը բավարարում է ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 23.03.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 43 453 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Փաստորեն նման պայմաններում Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, չի համապատասխանում իրականությանը:

Արդյունքում արձանագրվել է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանի կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ ասած, առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ա/Ձ-ն չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում, Մասնակցի կարծիքով, չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն (այդ թվում նաև «ա» ենթակետի), քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Մասնակիցը հայտնել է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտնել է, որ եթե 22.12.2010թ. ընդունված «Գնումների մասին» << օրենքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք էր հանդիսանում նաև մասնակցի կողմից կեղծ տվյալի ներկայացումը, ապա 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված և ներկայումս գործող «Գնումների մասին» << օրենքով «կեղծ տվյալի ներկայացումը» որպես մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք հանվել է օրենքի տեքստից:

«Գնումների մասին» << օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Մասնակցի կարծիքով, չի հանդիսանում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի Մասնակիցը գտնում է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Մասնակիցը նշել է նաև, որ նման դիրքորոշում է հայտնել նաև << գնումների բողոքարկման խորհուրդը իր բազմաթիվ նախկինում կայացրած որոշումներով:

Ա/Ձ Կարեն Ավանեսյանը << գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է իրեն չվերագրել «Գնումների մասին» << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա/Ձ Կարեն Ավանեսյանը << գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.05.2018թ. գրությամբ կրկին պնդել է, որ Մասնակիցը հայտը ներկայացնելու

օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ: Միևնույն ժամանակ Մասնակիցը հայտնել է, որ 23.04.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, որի պատասխանն այդպես էլ չի ստացվել: Մասնակիցը 15.05.2018թ. կրկին հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե: Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտնել է, որ Մասնակիցը չի կարողանում ձեռք բերել ապացույց, որը կհիմնավորեր, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են:

Վերոհիշյալ գրությամբ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը խնդրել է ՍՑ-ԱՄ-2018/48 ընթացակարգի որոշման հրապարակման նիստի օրը հնարավորության դեպքում հետաձգել և նշանակել այնպիսի հերթի, որպեսզի Մասնակիցը հնարավորություն ունենա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստանալ համապատասխան հարցման վերաբերյալ պատասխաններ:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/48 ընթացակարգի շրջանակներում 23.04.2018թ. ժամը 11:10-ին և 26.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 26.04.2018թ. ժամը 11:20-ին նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 08.05.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը 13.04.2018թ. թիվ 01.3/11/498503-18 գրությամբ ներկայացրել է Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/48 ընթացակարգի շրջանակներում 23.04.2018թ. ժամը 11:10-ին և 26.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/48 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/48 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 23.03.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Կարեն Ավանեսյանը:

2. Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 37 000 ՀՀ դրամ:

3. Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 05.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43 453 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.04.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ, հիմք ընդունելով Ա/Ձ Կարեն Ավանեսյանի ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը, Ընթացակարգը հայտարարել է չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7250-18 գրությունը, ՀՀ ոստիկանության 13.04.2018թ. թիվ 01.3/11/498503-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 23.03.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Կարեն Ավանեսյանը:

Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***37 000 ՀՀ դրամ:***

Միևնույն ժամանակ Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 04.04.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե Ա/Ձ Կարեն Ավանեսյանի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 05.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43 453 ՀՀ դրամի չափով:***

Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին գրությամբ ինչպես նաև նիստի ժամանակ հայտնել է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ և դրա վերաբերյալ համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, որից ստացվելիք պատասխանը կներկայացվի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՍՑ-ԱՄ-2018/48 ընթացակարգի քննության ժամկետը 07.05.2018թ. կայացրած միջանկյալ որոշմամբ երկարաձգել է տաս օրացուցային օրով: Արձանագրում եմ, որ սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Կարեն Ավանեսյանի կողմից ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ դիրքորոշումը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել, հետևաբար ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հիմք է ընդունում Ա/Ձ Կարեն Ավանեսյանի ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում տրամադրված եզրակացությունը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Կարեն Ավանեսյանը հայտը ներկայացնելու օրվա՝ 23.03.2018թ., դրությամբ ունի ժամկետանց հարկային***

պարտավորություն՝ 43 453 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը: Մինչդեռ Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն

ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում եմ, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2018-ՈՒԱՎ-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7250-18 գրությամբ Ա/Ձ Կարեն Ավանեսյանին (ՀՎՀՀ՝ 35031716) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Կարեն Ավանեսյանին

ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ